

# ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ «ՊԵՏՐՈՍ ՄԵԾ» ՇՔԱՆՇԱՆԸ, ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ

*Posted on July 20, 2015 by Keghart*

**keghart.com**

Category: [Opinions](#)



**✖ Վահրամ Աղաջանյան**, Ստեփանակերտ, 20 Հուլիս 2015

"Երրորդ Ուժ Պյուն" փակված թերթի գլխավոր խմբագիր

Ամառային արձակուրդների շրջանը մոտենում է ավարտին, իսկ Լեռնային Ղարաբաղի հազարավոր քաղաքացիներ մինչ օրս չեն ստացել իրենց խղճուկ աշխատավարձերն ու Էլ ավելի խղճուկ կենսաթոշակները, որոնց չափը լավագույն դեպքում տատանվում է 80-200 դոլարի սահմաններում: Խոսքն առաջին հերթին ուսուցիչների մասին է, որոնք արդեն օգոստոսի 5-ին պետք է աշխատանքի դուրս գան: Գրեթե ամեն օր զայրացած արցախցիները զանգահարում են ԼՂՀ կառավարությունն եւ Ստեփանակերտի քաղաքապետարան, բացատրություններ պահանջելով իշխանություններից, սակայն ամեն անգամ հետևում է նույն պատասխանը, "պետական նպաստներ չկան":

Ահաբեկված ու հիմնովին ճնշված ԼՂՀ-ի լրատու միջոցները վախենում են լուսաբանել մայրաքաղաքում եւ հանրապետության շրջաններում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը: Ճիշտն ասած, լուսաբանող էլ մեծ հաշվով չկա. բոլոր անկախ լրատու միջոցները "ժողովրդավարական" Ղարաբաղում հեռատեսորեն ոչնչացվել են վաղուց, իսկ պաշտոնական լրատվամիջոցները "հասկանալի" պատճառներով ծպտուն հանել չեն համարձակվում...

**✖ Վահրամ Աղաջանյան**, Ստեփանակերտ, 20 Հուլիս 2015

"Երրորդ Ուժ Պյուն" փակված թերթի գլխավոր խմբագիր

Ամառային արձակուրդների շրջանը մոտենում է ավարտին, իսկ Լեռնային Ղարաբաղի հազարավոր քաղաքացիներ մինչ օրս չեն ստացել իրենց խղճուկ աշխատավարձերն ու Էլ ավելի խղճուկ կենսաթոշակները, որոնց չափը լավագույն դեպքում տատանվում է 80-200 դոլարի սահմաններում: Խոսքն առաջին հերթին ուսուցիչների մասին է, որոնք արդեն օգոստոսի 5-ին պետք է աշխատանքի դուրս գան: Գրեթե ամեն օր զայրացած արցախցիները զանգահարում են ԼՂՀ կառավարությունն եւ Ստեփանակերտի քաղաքապետարան, բացատրություններ պահանջելով իշխանություններից, սակայն ամեն անգամ հետևում է նույն պատասխանը, "պետական նպաստներ չկան":

Ահաբեկված ու հիմնովին ճնշված ԼՂՀ-ի լրատու միջոցները վախենում են լուսաբանել մայրաքաղաքում եւ հանրապետության շրջաններում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը: Ճիշտն ասած, լուսաբանող էլ մեծ հաշվով չկա. բոլոր անկախ լրատու միջոցները "ժողովրդավարական" Ղարաբաղում հեռատեսորեն ոչնչացվել են վաղուց, իսկ պաշտոնական լրատվամիջոցները "հասկանալի" պատճառներով ծպտուն հանել չեն համարձակվում...

Այս իրավիճակը տևում է արդեն ավելի քան 7 ամիս, սկսած նախորդ տարվա դեկտեմբերից: Կրքերը սոցիալական վճարումների, ավելի ճիշտ "չվճարումների" շուրջ այնքան են բորբոքված, որ խնդրի եռությունն ու պատճառները տեղում պարզելու նպատակով ԼՂ են պարբերաբար մեկնում ՀՀ հատուկ պատվիրակություններ: Նույնիսկ ՀՀԿ անդամները, որոնց դժվար է կասկածել ժողովրդի

ճակատագրի վերաբերյալ, այսպես ասած, դեմոկրատական տառապանքների մեջ, չեն դիմացել ու  
ԼՂ հեռուստատեսություն կեսբերան քննադատել են ԼՂՀ-ում բյուջետային միջոցների աներևակայելի  
չափերի հասնող ոչ նպատակային ծախսերը, պարզ ասած՝ զանգվածային գողությունն ու ԼՂՀ  
բնակչության անդադար կողոպուտը:

Ավելի ուշ Հայաստանի պաշտոնական լրատու միջոցներում տեղեկություն առկայծեց այն մասին, որ  
ՀՀ իշխանությունները լրացուցիչ 20 մլն դոլար են հատկացրել Ղարաբաղի ղեկավարությանը՝  
աղետալի իրավիճակը սեղմ ժամկետներում շտկելու համար: Դրանից հետո Ղարաբաղյան  
հեռուստատեսության պաստառների վրա հայտնվել է ուրախությունից պայծառացած ԼՂՀ  
վարչապետ Արա Հարությունյանն ու հանդիսավորությամբ հայտարարել, որ այսուհետ, ս.թ.  
ապրիլից, աշխատավարձերի եւ կենսաթոշակների հատկացման ոչ մի ձգձգում այլևս չի լինելու.  
դրանց ժամանակին վճարումը ԼՂ-ում հիմա հավասարազոր է գրեթե դյուցազնական սխրանքի:  
Սակայն մեկ ամիս անց իրավիճակը կրկնվեց եւ ամենավատ եղանակներով տևում է մինչ օրս:

Քանի որ պաշտոնական բացատրությունների Ղարաբաղի ժողովուրդը այդպես էլ չարժանացավ, ԼՂ  
մայրաքաղաքում շրջանառվում են ամենաչնաշխարհիկ լուրերը ստեղծված իրողությունների  
վերաբերյալ: Ըստ դրանց, ԼՂՀ բյուջեից գողացվել է 2-ից 6 մլրդ դրամ, ինչի հետևանքով  
Կենտրոնական Բանկի որոշ աշխատողներ հայտնվել են տնային կալանքի տակ: Նշյալ լուրերի  
համաձայն, Լեռնային Ղարաբաղի իշխանությունները հրաման են ստացել Մոսկվայից եւ ուժային այլ  
կենտրոններից, համաձայն որի Արցախի ժողովրդին պետք է հոգեբանորեն, աստիճանաբար  
պատրաստել տարածքային զիջումների հոգուտ Ադրբեջանի: Դրա համար էլ արդեն այսօր  
չեզոքացվում են ապագա դիմադրության բոլոր հնարավոր օջախները: Այդ նպատակով  
քաղաքացիներին պետք է հասցնել ծայրահեղ աղքատության եզրին, քանի որ չքավորը բարձր  
քաղաքականությամբ զբաղվելու ժամանակ չունի և նրան հեշտ է պարտադրել ցանկացած որոշում:  
Կողմնակի նպատակներից մեկն էլ իբր հակասությունների խորացումն է ՀՀ և ԼՂՀ միջև, քանի որ  
Ղարաբաղի հիմնական ֆինանսավորումը իրականացվում է Երևանից և դժգոհությունը ՀՀ-ից տվյալ  
պարագայում անխուսափելի է:

Դժվար է ասել, թե որքանով են հավաստի այս տեղեկությունները, քանի որ երկրորդ հայկական  
հանրապետությունում, ըստ երևույթին, արգելված է կուտակված խնդիրների նույնիսկ մակերեսային  
և թեթև քննարկումը:

Հետաքրքրականն այն է, որ Լեռնային Ղարաբաղը իր նյութական աղբյուրների հարուստ  
կարողություններով ի վիճակի է կերակրել ոչ միայն ինքն իրեն, այլև մի քանի երկրներ միասին  
վերցված: Խոսքը հատկապես գյուղատնտեսական արտադրանքի մասին է: Սա ԼՂ տնտեսական  
ներուժը ուսումնասիրած առանց բացառության բոլոր փորձագետների կարծիքն է: Բայց այդ  
արտադրանքի հիմնական մասը մինչ օրս առաքվում է կիսաքարքարոտ Հայաստանից, որտեղ, ի  
տարբերություն Ղարաբաղի, քիչ են բերրի հողերը: Մարդիկ ԼՂ-ում բառացիորեն ոսկու վրա են  
ապրում ու քայլում, բայց ոչ այն է իշխանական ապաշնորհ վերատեսչության, ոչ այն է արտաքին  
պատվերի պատճառով չեն ցանկանում օգտագործել սեփական ներուժի գոնե 10%-ը.

Ըստ լրատու միջոցների հրապարակումների, վերջին տվյալներով, Ռուսասանի հայտնի "Geologix Group" ընկերությունը, որը մասնագիտացած է ինժեներական որոնումների, նախագծման, օգտակար հանածոների հետախուզման և որոնման մեջ, մտադիր է ոսկու լայնածավալ արդյունահանում սկսել Լեռնային Ղարաբաղում: Այս մասին հայտարարել են Նշյալ ընկերության հիմնադիրները՝ 30-ամյա Նիկիտա Կոչևը եւ Պավել Կոպիտինը, ԼՂՀ-ում հետախուզման արդյունքների մասին պատմելով "Ֆիրմայի գաղտնիքը" ամսագրի լրագրող Նաստյա Չերնիկովային: Հարցազրույցում նրանք տեղեկացրել են վերջինիս, որ իրենց առաջարկել են արտոնագիր ստանալ ոսկու արդյունահանման ՀՀ մի փոքր հանքավայրում: Այդ ժամանակ էլ գաղափար առաջացավ դիտարկել ոսկու հանքավայրերը նաև Լեռնային Ղարաբաղում:

"Խորհրդային տարիներին Ադրբեջանի կողմից կազմակերպած արշավախմբերը պարզել են, որ ԼՂՀ-ի միայն Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում կա 1250 տոննա ոսկու, 4550 տոննա արծաթի, 1,84 մլն տոննա պղնձի, 660,000 տոննա կապարի և այլ մետաղների պաշարներ: Շատ հեշտ էր ստանալ այդ հանքավայրերը, քանի որ չճանաչված հանրապետությունում մրցակցություն գրեթե չկա: Հանքավայրը պատկանում է Լեռնային Ղարաբաղի իշխանություններին, նրանց ներկայացուցիչները հրավիրել են մեզ հանդիպել ԼՂ նախագահ Բակո Սահակյանի հետ", - գրել է Ն. Չերնիկովան: Ռուսական ձեռնարկության ղեկավարները հայտնեցին նրան, որ արդեն 2015 թ. ամռանը ընկերությունն մտադիր է ոսկու լայնածավալ արդյունահանում սկսել Արցախում:

Արցախի Երկրաբանական ֆոնդում գրանցված է 285 հանքավայր և օգտակար հանածոների արդյունահանման կետեր, որոնցից 83-ը մետաղական են, 197-ը ոչ մետաղական, 5-ը՝ վառելիքի: Իրականացվում է 78 ծրագիր, որոնցից 64-ը վերաբերում է կյութական աղբյուրների արդյունահանմանը, 14-ը՝ դրանց հետազոտություններին:

Լեռնային Ղարաբաղը բազմազան ու հարուստ հումք ունի նաեւ շինարարական նյութերի, առաջին հերթին դաշտային սպաթի արտադրության համար: Կան նաև ցեմենտի, կղմինդրի արտադրության լայն հնարավորություններ: Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ծավալների ավելացումը հանրապետությունը կապահովի բնական անհրաժեշտ շինանյութերով, իսկ հետագայում ԼՂՀ-ն կարող է կարգավորել նաև դրանց արտահանման գործընթացը:

Արցախը հարուստ է նաեւ աղբյուրներով և հանքային ջրերի պաշարներով, ինչը չափազանց արժեքավոր ապրանք է այսօր:

Բացի "Բեյզ մեթըլ"-ից, ԼՂ-ում օգտակար հանածոների որոնումներով, դրանց արդյունահանման եւ մշակման գործունեությամբ մտադիր են զբաղվել նաև այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են "Գոլդ սթար"-ը, "Իսթ-Վեսթ գլոբալ մայնինգ inc."-ը, "Գեգամենթ պյունս"-ը, "Էներգիա պյունս"-ը եւ այլ: Ընդ որում, "Բեյզ մեթըլ"-ը ԼՂ-ում ոսկու արդյունահանմամբ զբաղված է վաղուց:

Ու՞ր են գնում բոլոր այդ միջոցներն եւ ինչու՞ դրանք եւ ՀՀ-ից ստացվող միջպետական վարկը չեն բավարարում Ղարաբաղի քաղաքացիների ծիծաղելու չափ ցածր թոշակների եւ աշխատավարձերի վճարման համար, հայտնի է, երևի, միայն Աստծուն և ԼՂ նախագահ Բակո Սահակյանին:

Թեպետ, ըստ ամենայնի, դա հայտնի է նաև Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) պետական որոշ

կառուցներին, որոնք պարզապէս են Բաղր Աստուծոյ «Պետրոս Մեծ» 1-ին աստիճանի շքանշանով ու «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» ՌԴ մեդալով: Թե ինչ ծառայություններ է մատուցել Ղարաբաղի ղեկավարը օտարերկրյա պետությանը, ինչպես ռուսները կասեն՝ յոթ կնիքների տակ թաքցված գաղտնիք է:

Հայտնի է միայն, որ «Պետրոս Մեծ» շքանշանով պարգևատրվում են այն քաղաքացիները, որոնք, մեջբերում ենք՝ «իրենց բարձր նվաճումներով և պետական, արտադրական, գիտահետազոտական, սոցիալական, մշակութային, հասարակական ու բարեգործական գործունեությամբ նպաստում են Ռուսաստանյան պետականության ամրապնդմանը»: Նույնը վերաբերում է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» ՌԴ մեդալին: Այն դարձյալ տրվում է «Ռուսաստանյան պետականության ամրապնդմանը» նպաստած անձանց: «Օգուտ, պատիվ և փառք» շքանշանի նշանաբանը կրկնում է Սուրբ Վլադիմիր կայսերական շքանշանի հին նշանաբանի տեքստը: Եվ մեդալը, և շքանշանը սահմանվել են 1994 թ. մարտի 2-ին, ՌԴ նախագահի հատուկ հրամանագրով:

Ամենաուշագրավն այն է, որ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» ՌԴ մեդալը [պետական պարգև է \(Медаль ордена «За заслуги перед Отечеством»\):](#) Հուսանք, որ ԼՂՀ նախագահի մամուլի ծառայությունը, ի վերջո, կբացի այս սարսափելի պետական գաղտնիքի առեղծվածային փակագծերը և կպատմի ԼՂՀ և ՀՀ քաղաքացիներին հայ պաշտոնյայի նկատմամբ ունեցած ռուսական իշխանությունների «թուլության» պատճառների մասին: Միաժամանակ և կտեղեկացնի, թե երբ է այդ պաշտոնյան վերջապես բարեհաճելու կյանքում գոնե մեկ անգամ կատարել իր խոստումը ու ժամանակին վճարել «իր» երկրի ուսուցիչների եւ թոշակառուների մուրացկանային «սուբսիդիաները»:

Թե չէ, ճիշտն ասած, փոքր-ինչ անհարմար է ստացվում...

